ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«25» հոկտեմբերի 2017թ. № 532-Հ

ՀՐԱՄԱՆ

«ՕՆԻՐԱ ՔԼԱԲ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐՊԵՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Օնիրա Քլաբ» ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում 2017թ. հոկտեմբերի 10-ի թիվ 03/24-2/18251-17 գրությամբ հարուցված վարչական վարույթի նյութերի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2017թ. սեպտեմբերի 08-ի թիվ 452-Ա հրամանի հիման վրա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից իրականացված «Օնիրա Քլաբ» ՍՊԸ-ին Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 2014թ. հունվարի 01-ին տրված թիվ ԽՏ-001 խաղատան կազմակերպման լիցենզիայի պայմանների և պահանջների կատարման ստուգման արդյունքում 2017թ. հոկտեմբերի 10-ին կազմված թիվ ԽՏ-03 ակտի «Օնիրա Քլաբ» ՍՊԸ-ն խախտել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով, 23-րդ հոդվածով և 24-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջները:

Վերոգրյալի հիման վրա ղեկավարվելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ, 13-րդ և 14-րդ կետերով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 18-ի թիվ

503-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ, 23-րդ հոդվածով և 24-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջները խախտելու համար «Օնիրա Քլաբ» ՍՊԸ-ի նկատմամբ նշանակել տուգանք ընդամենը մեկ միլիոն չորս հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2. Նշանակված տուգանքը ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գանձապետական 900005024154 հաշվեհամարին:

3. Նշանակված տուգանքը սույն հրամանն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո՝ ամբողջությամբ կամ մասամբ վճարված չլինելու դեպքում, ենթակա է հարկադիր կատարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:

Վ. ԱՐԱՄՅԱՆ